

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 9-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին>> N 1055-Ն որոշման 2-րդ հավելվածի <<Գերակա խնդիրներ>> բաժնի տարածքային զարգացման հայեցակարգից բխող նոր գործիքակազմի ձևավորման շրջանակներում տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման մոտեցումների և աղբյուրների վերաբերյալ

Նախաբան

ՀՀ կառավարության կարևորագույն խնդիրներից է ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացումը, աղքատության կրճատումը, մարզերի և Երևանի, ինչպես նաև առանձին մարզերի միջև զարգացման համաչափ միտումների պահպանումը: Այն որպես կառավարության կարևորագույն գործառույթ ամրագրված է նաև ՀՀ Սահմանադրությամբ, մասնավորապես 89-րդ հոդվածի 4.1 կետով սահմանված է, որ ՀՀ կառավարությունը իրականացնում է տարածքային զարգացման պետական քաղաքականությունը:

ՀՀ-ում առկա են տարածքային զարգացումը պայմանավորող (այդ թվում համաչափ) մի շարք տարաբնույթ գործոններ, օրինակ՝ սուր արտահայտված բնակլիմայական տարբերությունները, կապիտալ ներդրումային քաղաքականության անհամաչափությունը, տարածաշրջանում արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման տարատեսակ հնարավորությունները, ենթակառուցվածքների առկայությունը և վիճակը, մարզի դիրքը միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների, ինչպես նաև Երևանի նկատմամբ, պետության վարչատարածքային բաժանումը և այլն:

Վերը նշված բնակլիմայական պայմանների տարբերությունների մեղմումը գործնականում հնարավոր չէ ապահովել, սակայն տարածքային զարգացման վրա ազդեցություն ունեցող թվարկված մյուս գործոնների արդյունավետ կառավարման դեպքում կբարձրանա պետության կողմից իրականացվող տարածքային զարգացման (այդ թվում համաչափ) քաղաքականության արդյունավետությունը, որն իր հերթին մեծապես կնպաստի հանրապետությունում աղքատության կրճատմանը:

ՀՀ տարածքների համաչափ զարգացման, Երևանի և մարզերի, ինչպես նաև մարզերի միջև առկա կենսամակարդակների տարբերությունների նվազեցման և մարզերի զարգացման տեմպերը Երևանի զարգացման տեմպերին մոտեցնելու նպատակով 2011թ հունիսի 30-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվեց «Տարածքային համաչափ զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» թիվ 38 արձանագրային որոշումը: Հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրում որպես տարածքային զարգացման առանձին միջոցառում նախատեսվեց «Տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման մոտեցումների և աղբյուրների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը», որը հանդիսանալով տարածքային զարգացման հիմնական մեխանիզմներից մեկը՝ **իրագործում է հետևյալ**

նպատակները՝ մի կողմից պետք է նպաստի տարածքներում աղքատության նվազմանը, մյուս կողմից, դրա հետ թղթակցվող, տարածքների տնտեսական գրավչության և մրցունակության բարձրացմանը: Այս նպատակները փոխկապակցված և փոխապայմանավորված են: Տարածքներ ասելով այս համատեքստում պետք է նկատի ունենալ ինչպես առանձին վարչատարածքային միավորները (համայնք, համայնքների խումբ, մարզ), այնպես էլ այլ գործոններով (աշխարհագրական, ենթակառուցվածքային, ռելիեֆային և այլն) պայմանավորված տարածաշրջանները:

Հայաստանի Հանրապետությունում տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման անհրաժեշտությունը պայմանավորվում է հետևյալ հանգամանքներով, մասնավորապես.

1. ՀՀ մարզերում (համայնքներում) տարածքային համաչափ զարգացման և տվյալ տարածաշրջանի աղքատության կրճատման մակարդակի առումով իրականացվող տարբեր տեսակի ներդրումների գնահատման բացակայությունը:

ՀՀ-ում իրականացվող կապիտալ ներդրումները ներկայումս չեն գնահատվում տարածքային համաչափ զարգացման և տվյալ տարածաշրջանում աղքատության կրճատման գործընթացում ունենալիք դերակատարման տեսանկյունից: Բացառությամբ վերջին տարիների՝ մարզերում հրատապ խնդիրների լուծման նպատակով հատկացված միջոցներից, մնացած մյուս պարագաներում, հաշվի չի առնվել նույնիսկ մեկ շնչի հաշվով կապիտալ ներդրումների որոշակի համամասնությունների պահպանումը: Նման մոտեցումը բացասաբար է անդրադառնում աղքատության կրճատման գործընթացում ներդրումների արդյունավետությանը և միաժամանակ առաջացնում է տարածքային զարգացման համամասնությունների շեղում: Նկատի ունենալով հանրապետությունում աղքատության մակարդակի բարձր ցուցանիշը, ինչպես նաև պետական սուղ միջոցները արդյունավետ օգտագործելու գերխնդիրը, անհրաժեշտ է ապահովել կապիտալ ներդրումների գնահատումը աղքատության կրճատման և տարածքային համաչափ զարգացման համատեքստում:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից ընտրանքային հարցումների միջոցով իրականավում է աղքատության մակարդակի գնահատում: Գնահատումն իրականացվում է նաև ըստ մարզերի և Երևան քաղաքի, սակայն ոչ ըստ յուրաքանչյուր համայնքի: Տվյալ խնդիրը լուծելու նպատակով ՀՀ տարածքային կառավարման նախարար-

րության կողմից մշակվել է համակարգ (Աղքատության գնահատման մոդիֆիկացված համաթիվ), որը հնարավորություն է ընձեռում յուրաքանչյուր համայնքի սոցիալ-տնտեսական տվյալների հիման վրա գնահատելու տվյալ համայնքի աղքատության մակարդակը, ինչպես նաև այն գործոնները, որոնցով պայմանավորված է տվյալ համայնքի աղքատ լինելը: Առկա է նաև համայնքները նկարագրող համապատասխան տեղեկատվական բազա: Ըստ էության առկա է համապատասխան գործիքակազմ, որի միջոցով հնարավոր է ոչ միայն գնահատել աղքատությունը, այլ նաև ցույց տալ խնդիրները, որոնցով պայմանավորված տվյալ համայնքը հանդիսանում է աղքատ: Նշվածը հնարավորություն է տալիս իրականացնելու աղքատության մակարդակը կրճատող կոնկրետ ծրագրեր:

2. ՀՀ-ում տարածքների համաչափ զարգացման գնահատման տեսակետից տարբեր ֆինանսական միջազգային կառույցների և դոնորների միջոցներով իրականացվող ծրագրերի համակարգման անհրաժեշտությունը:

Ներկայումս տարբեր ֆինանսական միջազգային կառույցների և դոնորների կողմից (Վերակառուցման և Ջարգացման Միջազգային Բանկ (IBRD), Ջարգացման Միջազգային Ընկերակցություն (IDA), Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկ (EBRD), Գյուղ. Ջարգացման Միջազգային Հիմնադրամ (IFAD), ՕՊԵԿ-ի Միջազգային Ջարգացման Հիմնադրամ (OFID), Ասիական Ջարգացման Բանկ (ADB), Արժույթի Միջազգային Հիմնադրամ (IMF), Եվրոպական Ներդրումային Բանկ (EIB), Համաշխարհային բանկ և այլն) տնտեսության տարբեր ոլորտներում իրականացվում են բազմաթիվ ծրագրեր՝ վարկային կամ գրանտային տեսքով:

Ծրագրերն իրականացվում են տարբեր ծրագրերի իրականացման գրասենյակների, պետական հիմնարկների և այլ կառույցների կողմից, ընդ որում առկա են նաև դեպքեր, երբ միևնույն վարկային կառույցի կողմից, տնտեսության տարբեր ոլորտներում, ծրագրերի իրականացման համար ստեղծված են տարբեր կազմակերպություններ:

Այս պարագայում մեծանում են վարչական ուղղությամբ իրականացվող ծախսերը և հակառակը՝ նվազում զուտ կապիտալ ներդրումների կամ ծառայությունների մատուցման որակի բարելավման ուղղությամբ իրականացվող ծախսերը, որոնց համար ի սկզբանե նախատեսված են այդ միջոցները:

Տարածքային զարգացման հիմնադրամի առկայությունը բոլոր միջոցների համախմբման և ծրագրերը մեկ աղբյուրից իրականացման հնարավորություն կընձեռի: Վարչական ծախսերի կրճատման հետ միաժամանակ այս պարագայում կմեծանա նաև միջոցների ծախսման արդյունավետությունը, քանի որ կմեծանա հնարավորությունը ծրագրերը ուղղորդելու՝ ըստ տվյալ տարածաշրջանի ռազմավարական նշանակության կամ սոցիալ-տնտեսական իրավիճակի: Միաժամանակ՝ կբացառվի միևնույն վարչատարածքային միավորում միանման ծրագրերի իրականացումը:

Կարելի է դիտարկել միջազգային կազմակերպությունների միջոցով իրականացվող ծրագրերի համակարգման մեկ այլ տարբերակ ևս, երբ ծրագրերը իրականացվում են արդեն իսկ ձևավորված կառույցների միջոցով, սակայն բոլոր ծրագրերը քննարկվում են տարածքային զարգացման խորհրդում և ստանում են համապատասխան գնահատականներ՝ տարածքային համաչափ զարգացման և աղքատության կրճատման գործընթացում ունենալիք դերակատարման առումով:

Միջազգային փորձ

ՀՀ-ի համար տարածքային զարգացման հիմնադրամի առավել արդյունավետ մոդելի առաջարկման նպատակով ուսումնասիրվել է եվրոպական մի շարք երկրներում առկա փորձը: Ուսումնասիրությունները ցույց են տվել որ բոլոր երկրներումանկախ ձևավորված հիմնադրամների կառուցվածքից և կարգավիճակից դրանց գործունեության նպատակները և մեխանիզմները ընդհանուր բնույթ են կրում և համահունչ են նախաբանում նշված նպատակներին: Առկա են տարբերություններ կառավարման մոդելների, կիրառվող ֆինանսական գործիքների և ֆինանսավորման աղբյուրների առումով: Մասնավորապես՝ Սլովենիայում տարածքային զարգացման հիմնադրամի միջոցներով իրականացվում են՝ բիզնես ծրագրերի համաֆինանսավորում (մինչև 40%-ի չափով), ենթակառուցվածքների շինարարություն (ներդրումային արժեքի մինչև 50%-ի չափով), բիզնեսի զարգացման նպատակով անհրաժեշտ ենթակառուցվածքների շինարարություն (ներդրումային արժեքի մինչև 40%-ի չափով), տարածքային զարգացման ծրագրերի կազմում, ծրագրերի կազմման գործընթացին աջակցության ցուցաբերում (իրականացվող ծախսերի մինչև 40%-ի չափով), Հունգարիայում՝ նոր աշխատատեղերի ստեղծման հետ կապված սոցիալական ենթակա-

ուղղվածքների ստեղծման աջակցում, տրանսպորտի, հեռահաղորդակցության և էներգետիկ համակարգում ներդրումների իրականացման աջակցում, բիզնեսին աջակցության ցուցաբերում՝ նորարական տեխնոլոգիական ներդրումների իրականացման ոլորտում, բնապահպանական և զբոսաշրջության զարգացման ծրագրերի աջակցում, Սլովակիայում ուղղակի ներդրումների իրականացում, իրավաբանական անձանց սուբսիդիաների, վարկերի, բանկային երաշխիքների տրամադրում, արժեթղթերի թողարկմանն աջակցության ցուցաբերում, Լատվիայում՝ ներդրումներ ձեռնարկությունների կանոնադրական կապիտալում, լրացուցիչ վճարումներ ձեռնարկություններին, աջակցություն տարածքային զարգացման ծրագրերի մշակման գործընթացին և այլն: Իհարկե այս բոլոր ուղղությունները տարածաշրջանի զարգացման հետ միաժամանակ կրճատում են նաև տվյալ տարածաշրջանում աղքատության մակարդակը: Կան նաև երկրներ, որոնք հիմնադրամի միջոցների որոշ մասն ուղղակի և նպատակային ուղղում են աղքատության մակարդակի կրճատմանը, մասնավորապես՝ Ուկրաինայում հիմնադրամի միջոցների 30%-ով ծրագրեր են իրականացվում միայն այն վարչատարածքային միավորներում, որտեղ 1 շնչի հաշվով ՀՆԱ-ն ցածր է երկրի 1 շնչի հաշվով ՀՆԱ-ի 75%-ից:

Մեր ուսումնասիրությունների արդյունքներից ելնելով առաջարկում ենք Հայաստանի համար առավել արդյունավետ տարբերակ դիտարկել Վրաստանի հանրապետությունում գործող համայնքային զարգացման հիմնադրամի մոդելը: Դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Վրաստանի հիմնադրամի ձևավորման պատմությունը ըստ էության արտացոլում է նույնատիպ խնդիրներ, որոնք առկա են Հայաստանում: Վրաստանում համայնքային զարգացման հիմնադրամը ձևավորվել է 1997թ.-ին: Հիմնադրամի հիմնական նպատակը տեղական ինքնակառավարման մարմինների ինստիտուցիոնալ և ֆինանսական կարողությունների ուժեղացմանն աջակցության ցուցաբերումն է: Այդ նպատակով հիմնադրամը իրականացնում է համայնքների սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքներում ու ծառայություններում ֆինանսական ռեսուրսների ներդրում, համայնքներին վարկերի տրամադրում, համայնքների վարկունակության գնահատում, ծրագրերի նախապատրաստման և կառավարման գործընթացին աջակցում:

Հայաստանի Հանրապետությունում տարածքային զարգացման հիմնադրամի գործառույթների սահմանում

Տարածքային զարգացման հիմնադրամների միջազգային փորձի ուսումնասիրման արդյունքում ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամի համար առաջարկում ենք հետևյալ գործառույթները.

1. Հանրապետությունում մասնավոր հատված-պետություն համագործակցության արդյունքում սոցիալ-փնտեսական զարգացման ծրագրերի իրականացում և մասնավոր հատվածի կողմից իրականացվող ծրագրերին աջակցության ցուցաբերում: ՀՀ-ում արդեն իսկ իրականացվել են մասնավոր հատվածին աջակցելու տարբեր ծրագրեր, մասնավորապես՝ 2011 թվականի գյուղացիական տնտեսություններին մատչելի գներով տրամադրվել են դիզվառելիք և պարարտանյութ, ցորենի, գարու և եգիպտացորենի սերմացու, ցածր տոկոսադրույքով վարկեր, իսկ արդյունաբերության ոլորտի կազմակերպություններին աջակցելու նպատակով, հետաձգվել է ավելացված արժեքի հարկի վճարումը և այլն:

Հիմնադրամի միջոցով արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացմանը աջակցումը ենթադրում է որոշակի ֆինանսական միջոցների նախատեսում միայն այդ ուղղությամբ ծախսելու նպատակով, իսկ աջակցության ցուցաբերման գործիքները կարող են լինել բազմաթիվ, մասնավորապես՝ բիզնես ծրագրերի համաֆինանսավորում, բիզնեսի զարգացման նպատակով անհրաժեշտ ենթակառուցվածքների շինարարություն, բիզնեսին աջակցության ցուցաբերում՝ նորարական տեխնոլոգիական ներդրման միջոցով, իրավաբանական անձանց սուբսիդիաների, վարկերի, բանկային երաշխիքների տրամադրում, արժեթղթերի թողարկմանն աջակցության ցուցաբերում, ձեռնարկությունների կանոնադրական կապիտալում ներդրումներ, ձեռնարկություններին լրացուցիչ վճարումներ և այլն:

Աջակցության եղանակները կարող են տարբերակված լինել նաև ըստ տարածաշրջանների՝ պայմանավորված տվյալ տարածաշրջանի ռազմավարական նշանակությամբ, սոցիալական լարվածության մեղմացման անհրաժեշտությամբ և այլն:

Հարկ ենք համարում նշել նաև, որ ներկայումս ՀՀ-ում նմանատիպ գործառույթներ մասամբ իրականացնում է Համահայկական բանկը, որի նպատակն է Ազգային մրցունակության խորհրդի ռազմավարության ներքո հաստատված համահայկական նշանակության նախագծերի ֆինանսավորումը, մասնավորապես՝ այն նախագծերի, որոնք պարունակում են նորարար տարրեր և իրականացվում են աշխարհի ցանկացած կետում համահայկական

ցանցի անդամների կողմից: Սակայն, ի տարբերություն Համահայկական բանկի, հիմնադրամի գործառույթները կարող են հանդիսանալ առավելապես տեղային նշանակությամբ ծրագրերի ֆինանսավորումը: Տարբեր կարող են լինել նաև պետություն-մասնավոր հատված համագործակցության մեխանիզմները:

2. Համայնքների ֆինանսական և ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում: Հանրային այնպիսի ծառայությունների արդյունավետ իրականացմամբ, ինչպիսիք են աղբահանությունը, լուսավորությունը, փողոցների բարեկարգումը, կոմունալ ծառայությունները և այլն, առավել շահագրգռված է տվյալ տարածքի բնակչությունը: Տարբեր են նաև միևնույն խնդրի լուծման տարբերակներ:

Այս խնդիրներն իրենց ծավալներով և կարևորությամբ տարբեր տարածքներում և համայնքներում տարբեր են, ինչն իր հերթին ենթադրում է միևնույն խնդրի լուծման տարբեր մոտեցումներ: Այսինքն՝ առաջացած յուրաքանչյուր խնդրի լուծում պահանջում է առանձնահատուկ մոտեցում, ինչը հնարավոր է միայն կայացած տեղական ինքնակառավարման համակարգի առկայության պայմաններում:

Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող գործառույթների շրջանակներում համայնքների զարգացմանն աջակցելը նախ և առաջ անհրաժեշտ է դիտարկել համայնքների վարկունակության գնահատման և վարկերի տրամադրման, համայնքային բաժնետոմսերի թողարկմանն (անհրաժեշտության դեպքում շուկայում դրանց ապահովագրմանը) աջակցելու համատեքստում:

Ելնելով համայնքի դիրքից (սահմանամերձ, բարձր լեռնային)՝ կարելի է քննարկել նաև տարբերակված տոկոսադրույքով վարկերի տրամադրման գաղափարը: Նմանատիպ վարկերի տրամադրումը անհրաժեշտ է նախատեսել ոչ միայն համայնքների կողմից կապիտալ ներդրումների, այլև ծառայությունների մատուցման որակի բարելավման համատեքստում:

3. Միջհամայնքային համագործակցության խրախուսում: Միջհամայնքային համագործակցությունը վերաբերում է երկու կամ ավելի հարևան համայնքների կողմից համատեղ գործունեությանը տեղական զարգացման ոլորտներում: Նման համագործակցությունը հնարավորություն է ընձեռում տեղական նշանակության խնդիրները լուծել առավել արդյունավետ: Միջհամայնքային համագործակցության արդյունքում իրականացվող ծրագրերում ենթադրվում է ռիսկերի, ծախսերի, վերահսկողության և օգուտների համատեղ կրում: Նման

պարագայում բարձրանում է իրականացվող ծրագրերի արդյունավետությունը, ընդ որում խոսքը կարող է վերաբերել ինչպես ծառայությունների մատուցմանը, այնպես էլ կապիտալ շինարարությանը:

Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից համայնքային նախաձեռնությունների ֆինանսավորման գործընթացում, որպես ծրագրերի ընտրության չափանիշ, կարելի է սահմանել ծրագրերը միջհամայնքային միավորումի կողմից ներկայացնելու գործոնը: Այն խթան կհանդիսանա միջհամայնքային միավորումների ձևավորման գործընթացում, որը հետագայում, դրսևորվելով այլ ոլորտներում, կստեղծի հավելյալ արժեք: Նմանատիպ փորձ առկա է Ֆինլանդիայում, որտեղ տարածքային զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվում են միայն այն ծրագրերը որոնք ներկայացվում են միջհամայնքային միավորումի կողմից: Այս պարագայում նպատակ է հետապնդվում զարգացնելու համայնքների՝ միմյանց հետ համագործակցելու ունակությունները:

4. Ուղղակի կապիտալ ծրագրերի իրականացում: Այստեղ անհրաժեշտ է դիտարկել հիմնադրամի միջոցներով հանրապետական նշանակությամբ ծրագրերի իրականացման գաղափարը: Մասնավորապես՝ Վրաստանում տվյալ հիմնադրամի միջոցներով վերջին տարիներին իրականացվել են այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են Թբիլիսի-Ռուսթավի նոր քաղաքային գերարագ մայրուղու շինարարությունը, Թբիլիսիի մետրոյի ընդլայնումը, Թբիլիսի քաղաքի Մտկվարի գետի նոր կամուրջի կառուցումը, Բաթումիի ափապաշտպան և լողափի գոտու զարգացումը, կեղտաջրերի մաքրման կայանի կառուցումը Մցխեթա քաղաքում, նմատիպ կայանի վերակառուցումը Քոբուլեթի քաղաքում և այլն:

Տարածքային զարգացման հիմնադրամի կառավարման մեխանիզմների սահմանում

Եվրոպական բոլոր երկրներում առկա տարածքային զարգացման հիմնադրամների կառավարումն իրականացվում է խորհուրդների կողմից: Սակայն տարբեր երկրներում հիմնադրամի խորհրդի կազմի և ձևավորման մոտեցումները տարբեր են, մասնավորապես՝ Սլովենիայում և Հունգարիայում հիմնադրամի կառավարումն իրականացվում է խորհրդի կողմից, որի անդամներն են տարածքային զարգացման քաղաքականության մեջ ներգրավված նախարարները, իսկ Հունգարիայում նաև տեղական իշխանությունների, բանկային

համակարգի և գիտական հաստատությունների ներկայացուցիչները: Լատվիայում նույնպես հիմնադրամի կառավարումն իրականացվում է խորհրդի կողմից, սակայն այն առանձնահատկությամբ, որ խորհրդին ընտրում է խորհրդարանը: Նմանատիպ խորհուրդների նախագահներ կարող են լինել և՛ երկրի վարչապետը, և՛ նախարարները:

Սակայն անհրաժեշտ է կարևորել այն փաստը, որ նմանատիպ խորհուրդներն իրենց երկրում զբաղվում են ոչ միայն հիմնադրամի միջոցների կառավարմամբ, այլև երկրի տարածքային զարգացման քաղաքականության մշակմամբ, առաջնահերթությունների որոշման և տվյալ առաջնահերթություններին հասնելու գործընթացում նաև հիմնադրամի միջոցների ծախսման ուղղությունների սահմանմամբ: Միաժամանակ անհրաժեշտ է շեշտել, որ բոլոր երկրներում առկա են որոշակի կառույցներ, որոնք իրականացնում են տվյալ խորհրդում քննարկվող ծրագրերի հավաքագրման, գնահատման և խորհուրդ ներկայացնելու գործընթացը:

ՀՀ-ի համար նույնպես առաջարկվում է հիմնադրամի կառավարման նպատակով ստեղծել տարածքային զարգացման խորհուրդ՝ որի անդամները կարող են հանդիսանալ տարածքային զարգացման բնագավառում շահագրգիռ նախարարները, Ազգային վիճակագրական ծառայության նախագահը, Կենտրոնական բանկի նախագահը /համաձայնությամբ/ ՀՀ Ազգային ժողովի համապատասխան հանձնաժողովների նախագահները /համաձայնությամբ/:

Խորհրդի նախագահը կարող է լինել ՀՀ վարչապետը, իսկ խորհրդի քարտուղարության լիազորությունները պետք է վերապահվեն ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը: Խորհրդի հիմնական լիազորությունները պետք է հանդիսանան ինչպես տարածքային զարգացման հիմնադրամով նախատեսված միջոցների բաշխումը, այնպես էլ տարածքային զարգացման հեռանկարային քաղաքականության մշակումը, մարզերի զարգացման ուղղությունների սահմանումը և մարզային զարգացման ծրագրերի հաստատումը, դրանց իրականացման գնահատումը և այլն: Խորհրդի քարտուղարության լիազորությունները ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը վերապահելու դեպքում անհրաժեշտ է նախարարությանն ապահովել համապատասխան կարողություններով:

**Տարածքային զարգացման հիմնադրամի միջոցների ձևավորման աղբյուրների,
բաշխման ուղղությունների և եղանակների սահմանում**

Տարբեր երկրներում տարբեր են հիմնադրամի միջոցների ձևավորման աղբյուրները, մասնավորապես՝ Ուկրաինայում միջոցների ձևավորման հիմնական աղբյուրը հանդիսանում է պետական բյուջեն՝ հաջորդ տարվա համար կանխատեսվելիք պետական ընդհանուր եկամուտների առնվազն 1%-ի չափով, Սլովենիայում նույնպես ձևավորման հիմնական աղբյուրը հանդիսանում է պետական բյուջեն՝ հաջորդ տարվա համար կանխատեսվելիք ՀՆԱ-ի առնվազն 1%-ի չափով, Լատվիայում՝ պետական բյուջեի միջոցների բացի, որպես աղբյուր սահմանվում են միջազգային վարկերը և օգնությունները, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից հատկացված միջոցները, նվիրատվությունները և այլն:

ՀՀ-ի համար որպես հիմնադրամի միջոցների ձևավորման հիմնական աղբյուր նպատակահարմար է նախատեսել պետական բյուջեն: Ընդ որում, այն անհրաժեշտ է դիտարկել ոչ թե որպես լրացուցիչ ծանրաբեռնվածություն պետական բյուջեի վրա, այլ ծրագրերի իրականացման համար հատկացվող միջոցների առավել արդյունավետ օգտագործման հնարավորություն: Այլ կերպ ասած, ներկայումս էլ պետական բյուջեից և՛ աղքատության կրճատման, և՛ տարածքների զարգացման նպատակով իրականացվում են ծրագրեր, սակայն համաչափություն ապահովելու տեսանկյունից արդյունավետության ցածր մակարդակով: Հիմնադրամի միջոցով ուղղակի այդ միջոցները կծախսվեն առավել շեշտադրված խնդիրների լուծման ուղղությամբ: Այսինքն՝ տարածքային զարգացման հիմնադրամը կգործի պետական բյուջեի կազմում և կհանդիսանա նրա մի մասը: Այս համատեքստում կարելի է դիտարկել յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով կանխատեսվելիք եկամուտների առնվազն 1 %-ը որպես հիմնադրամի միջոցներ սահմանումը:

Հիմնադրամի ֆինանսական ռեսուրսների աղբյուր կարող են հանդիսանալ նաև միջազգային վարկերը, դրամաշնորհները, մարդասիրական օգնությունները, համայնքների կողմից տրամադրվող որոշակի միջոցները և այլն:

Տարբեր են նաև հիմնադրամի միջոցների բաշխման (ծախսման) ուղղությունների և եղանակների վերաբերյալ ձևավորված մոտեցումները, մասնավորապես՝ Ուկրաինայում ծրագրերի գնահատման և միջոցների բաշխման գործընթացում 30% կշիռը հատկացվում է

տվյալ տարածաշրջանում ՀՆԱ-ի ցուցանիշին, 70% տարածաշրջանում բնակվող բնակչության թվաքանակին: Այլ է մոտեցումը Ռուսաստանում, որտեղ սահմանված է, որ պետությունը ֆինանսավորում է 5 մլրդ ռուբլուց ոչ պակաս արժողությամբ ծրագրեր, ծրագրի արժեքի առնվազն 25%-ը պետք է ներդրվի մասնավոր հատվածի կողմից, իսկ ծրագրի շահութաբերությունը կազմի 4%-ից ոչ պակաս և 11%-ից ոչ ավել:

ՀՀ-ի համար որպես հիմնադրամի միջոցների բաշխման ուղղություններ առաջարկում ենք դիտարկել.

ա/ Պետական մասնավոր հատվածի համագործակցության շրջանակում ծրագրերի իրականացումը՝ միջոցների 50 %-ի չափով:

բ/ Աղքատության կրճատմանն ուղղված ծրագրերի իրականացումը (աղքատության գնահատման մոդիֆիկացված համաթվի հիման վրա)՝ սոցիալական ենթակառուցվածքների զարգացման միջոցով՝ միջոցների 30 %-ի չափով:

գ/ Ինովացիոն սոցիալ-տնտեսական զարգացման խթանմանը ուղղված ծրագրերի իրականացում՝ միջոցների 10 %-ի չափով:

դ/ Համայնքների վարկավորում՝ միջոցների 10 %-ի չափով:

Միջազգային պրակտիկայում առավել տարածված են միջոցների բաշխման հետևյալ եղանակները՝ անվերադարձ և վերադարձվող սուբսիդիաներ, արտոնյալ վարկեր, բանկային երաշխիքներ, հարկային արտոնություններ, կապիտալ ներդրումներ, տնտեսական գոտու կարգավիճակի շնորհում, ըստ տարածաշրջանների տարբերակված տոկոսադրույքով վարկերի տրամադրում, մասնավոր հատվածին աջակցության ցուցաբերում ենթակառուցվածքային օժանդակության տեսքով, պետական գույքի փոխանցում համայնքներին սեփականության կամ կառավարման իրավունքով՝ զարգացման գործընթացում օգտագործելու նպատակներով և այլն:

Թվարկված գործիքակազմը այս կամ այն չափով կիրառելի է ՀՀ-ի համար և հիմնադրամի ձևավորման վերաբերյալ համապատասխան որոշման առկայության դեպքում հնարավոր կլինի քննարկել աջակցության ցուցաբերման յուրաքանչյուրի տեսակի և նրա ծավալի նպատակահարմարությունը:

Քննարկելի է նաև ըստ տարածաշրջանների տարբեր գործիքակազմ ընտրելու նպատակահարմարությունը և հնարավորությունը:

Տարածքային զարգացման հիմնադրամի գործունեության իրավական ձևաչափի սահմանում

ՀՀ-ում տարածքային զարգացման քաղաքականության տեսլականի սահմանման համար անհրաժեշտություն է տարածքային զարգացման օրենքի առկայությունը: Տարբեր անվանումներով նմանատիպ օրենքներ առկա են Եվրոպական բոլոր այն երկրներում որտեղ գործում են տարածքային զարգացման հիմնադրամներ: Օրենքներում հիմնականում սահմանվում են տվյալ պետության տարածքային զարգացման առաջնահերթությունները և դրանից բխող իրավահարաբերությունները, ինչպես նաև տարածքային զարգացման հիմնադրամ հասկացությունը: ՀՀ տարածքային զարգացման առաջնահերթությունները նույնպես նպատակահարմար է սահմանել համապատասխան օրենքով:

Ոլորտում ընդհանուր գործառույթների կանոնակարգման նպատակով անհրաժեշտ է նաև մի շարք այլ իրավական ակտերի ընդունում, մասնավորապես՝ տարածքային զարգացման հիմնադրամի կանոնադրությունը, տարածքային զարգացման խորհրդի կառուցվածքը և գործունեության կարգը, զարգացման ծրագրերի ընտրման և գնահատման մեթոդաբանությունը ու ընթացակարգերը և այլն: Թվարկված և անհրաժեշտ այլ իրավական ակտերը կնդունվեն ՀՀ կառավարության և վարչապետի որոշումներով:

Տարածքային զարգացման հիմնադրամի կապը բյուջեի և սոցիալ-տնտեսական այլ փաստաթղթերի հետ

Տարածքային զարգացման հիմնադրամի միջոցներով իրականացվելիք ծրագրերը պետք է մեծամասամբ կամ ամբողջովին բխեն մարզային սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրերից:

Մարզային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի կազմման նպատակով մարզպետարանների աշխատակազմերում այժմ էլ ձևավորված են մարզային զարգացման ծրագրի մշտական գործող ինստիտուցիոնալ կառույցներ (մարզային զարգացման հանձնաժողով, ոլորտային աշխատանքային խմբեր, մոնիտորինգի և գնահատման խումբ), որոնց մեջ բացի մարզպետարանի աշխատակիցներից, իրենց համաձայնությամբ ընդգրկվում են նաև տեղական ինքնակառավարման մարմինների, հանրապետական

գործադիր մարմինների տարածքային ծառայությունների, հասարակական և մասնագիտացված կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ, որոնց աշխատանքի արդյունքում կազմվում է յուրաքանչյուր մարզի զարգացման համար կարևոր նշանակություն ունեցող այդ ծրագիրը: Մարզի զարգացման ծրագրերում ոլորտային խնդիրների ճիշտ ձևակերպման ու մարզի զարգացման ծրագրում դրանց ընդգրկման նպատակով առկա է նաև համագործակցություն ճյուղային նախարարությունների, հանրապետական գործադիր և պետական կառավարման այլ մարմինների հետ:

Մասնակցային գործընթացի ապահովման համատեքստում, ծրագրի մշակման ընթացքում հաշվի են առնվում բնակչության տարբեր սոցիալական խմբերի, գործարարների, հասարակական և այլ կազմակերպությունների առաջարկություններն ու դիտողությունները:

Մարզային զարգացման ծրագրերում ընդգրկված յուրաքանչյուր ծրագիր անցնում է քննարկման բազմաթիվ փուլեր, որի արդյունքում ընտրվում են միայն այն ծրագրերը, որոնք առաջնային հիմնախնդիր են հանդիսանում տվյալ համայնքի (տարածաշրջանի) համար՝ հետևաբար առաջնային են նաև տվյալ տարածաշրջանում աղքատության կրճատման առումով: Այսինքն՝ մարզային զարգացման ծրագրերը կազմվում են ելնելով մարզերի կարիքների գնահատումից:

Այս համատեքստում, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ տարածքային զարգացման հիմնադրամի առաջնային նպատակներից պետք է հանդիսանա տարածաշրջաններում աղքատության կրճատումը, ակնհայտ է, որ հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերը պետք է բխեն մարզային զարգացման ծրագրերից:

Իրենց հերթին տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերը պետք է բխեն նաև ՄԺԾԾ-ից և պետության համար ռազմավարական նշանակություն ունեցող այլ փաստաթղթերից, մասնավորապես՝ Կայուն զարգացման ծրագրից:

Այս համատեքստում անհրաժեշտ է որոշակիորեն վերանայել ՄԺԾԾ-ի ձևավորման ընդհանուր տրամաբանությունը՝ գործընթացում ավելի մեծ տեղ հատկացնելով մարզային համաչափ զարգացում ապահովելու առաջնահերթությանը:

Միաժամանակ, տարածքային զարգացման հիմնադրամը պետք է դիտարկվի որպես պետական բյուջեի բաղկացուցիչ մաս: Այն պետք է գործի պետական բյուջեի կազմում և ենթակա լինի հաստատման յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի հաստատման հետ միաժամանակ: